15 (97). ԳԱՌՈՅԻ, Կ'ՈՉԱՂ-ՏՂԻ ԵՎ ՍԻՐԱՄԱՐԳԻ-ԽԱՎԻ ԽԵՔՅԱԹԸ

Հ'ըլնում ա չըհ'լնում մե խատ քյասիբ մարթ ա հ'լնում, էդ մարթին հ'լնում ա մե կնիկ, մե խատ էլ տղա, էլ զադ-զավադա չըհ'լնում։ Էդ քյասիբ մարթը, հ'իրան օրվա խացը ճարում էր ըստու-ընդու տունը նյոքարութուն[1] անելով։ Հ'իրիգունները չարսվից խաց-մաց առնում, բերում էր տունը ու ըտով յոլա ին էթում։

Հ'նցավ մե խելի ժամանակ, էտ տղեն բեսրցավ, դառցավ տասնհինգ տարեկան. մե օր հ'իրա խորն ասավ.— Հայրիկ, ես հիմի ջոջ տղա եմ. հ'նչի ընձ էլ չես տանում քու խետ ախշատանքի, մե զադ էլ ես կառնեմ, կբերենք մեր մորը կպախենք։

Խերը, որ[2] տղին հ'աշկի լուսի չափ սիրում-ուզում էր, ասավ.— Գառո ջան (տղի անունը Գառո էր)[3], հըլը մի թվալ ճիժ ես, ես քե դոր տանեմ, հըլը մնա բեսրցի, նոր հ'իրար խետ կէթանք ախշատանքի։ Համա տղեն շատ պըսպոր տղա էր, ուզում էր, որ խորը օգնած հ'լներ և ասու հ'իրա օրը ղայլեն տանում էր, դեմ ու դարձ էր հ'նգնում, թե պտի տանես որ տանես քու խետ, թե չէ՝ ես կփախնեմ տնից։ Էտ տղեն, որ էտենց ասավ, մերը վախեցավ, մարթին ասավ.— Քա թե, մե թվալ էրեխա յա, տնեն կէթա մե օյին-

---

1 Ա-ն հնչվում է քմայնացած (Ս. Կ.)։

2 Ո-ն երկբարբառային հնչում ունի (որ-վուոր, վէոր) (Ս. Կ.)։

3 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

մոյին կբերա հ'իրա գլոխը, հ'աշկ ու հ'երես սիվտկցրել ենք, էտ ճժին պախե, հիմի հ'լնի ինադ անա էթա, հ'իրա գլխին մե օյին բերա, ախշրքի մեջ հ'լնենք խաղկ ու խայտառակ։ Հետա քաղն հ'նգընում, թո գա քո ձեռքն բան կանա, ջուր կբերա, խաց կբերա, լեսան... բբասոք կբերա, որդեղն էլ գերնգով չըքաղվի, կասես՝ ձեռով կփիդա։ Մարթը միտք արավ, միտք արավ, ասավ.— Գառո ջան, մե քիչ համփերա, հեսա խացերն խառնում են, քաղն հ'նգավ, քեզի կտանեմ իմ խետ արտ քաղելու։

Տղեն ըտու վրեն շատ ուրխըցավ։ Հ'մընօր խորը խարցնում էր թե եվ ենք էթում արտ քաղելու։

Մի հ'իրիգուն էլ, Գառոյի խերը գերընդին խանեց սրփեց, չագուչ զնդանը հաղըրեց, չարխները դրեց ջուրը[1], նստավ գերընդին ծեծեց, Գառոյին ասավ.— Դե հ'ելի շուտ քնի, որ հ'առավոտ, էն գլխեն էթալու ենք արտ քաղելու։ Հ'առավոտ, աքլորականչ խեր ու տղա հ'ելան հ'իրանց հ'ռաթափ, խաց-մաց շլկին ու հ'նգան ճամփա, արտ քաղելու։ Մերը մնաց տունը։ Գառոն խացն էր շըլկե։ Էդ բեռը հ'իրան գերա շատ ծանդր էր, համա Գառոյի հեչ վեջը չէր։ Քանի մութն էր՝ խոր կողով էթում էր, համա օր լուսը բացվավ, Գառոն բեռը շլակը վաղնում էր հ'առեչ, կանգառ էր խանում, գլուլ հավաքում, հ'իշկում էր երուն-թռչուններին, խորը խաղար ու մեկ խարց էր տալում, չումքի հ'ինքը տնից հ'առչի դան էր դուս գալում։

Էտենց խեր ու տղա հ'իրանց խամար քաղ ին անում, լավ հախ առնում, չումքի Գառոն լավ տղա էր, վիր արտը էթում ին, արտատերը ըտուն սիրում էր, հախն էլ հ'ավել էր տալում։

Մե օր էլ խեր ու տղա գացեր ին մե հ'ուրիշ արտ ին քաղում։ Գառոն հ'իրան խամար, արտի միջխնում խաղում էր, մեկ էլ խերը կանչեց.— Գառո՛ ջան, Գառո՛, հլը հ'արի տես էս ի՛նչ նշխուն կ'ուշ[2] ա, համա յարալու յա, չեմ գիդում իմ գերնդին հ'նգավ կդրեց արավ յարալու թե ղաթի յարալու էր։

Գառոն խաղը թողեց, վազավ խոր կուշտը, տեսավ մեկ խատ նշխուն, խաղար հ'ռանգի թռչուն ա հ'նգե ընդե, թևը կոդրուկ։ Վրա խասավ, վերցրեց ձեռը, դրեց դոշին, տաքցրեց, էդ անլիզու հայվընին էլ ծոցից չխանեց։ Խերը շատ ասավ, վրեն եռսոտավ, որ էդ կ'ջին թալա դեն, համա տղի վրեն իլաջ-հնար չելավ։ ասավ.— Կտամ կխատցնեմ էտ քո կ'ջին, քեզի ասում եմ թալ դեն, հ'արի գործ արա։ Տղեն չլսավ, կայնավ խորն ասավ.— Հայրիկ, ինչ ու-

1 Ջ-ն հնչվում է շնչեղ (Ս. Կ.)։

2 Կ'-ն հնչվում է Կ և Ղ բաղաձայնների ձուլմամբ (Ս. Կ.)։

ղում ես արա, ես էս կ'շից ձեռ չեմ քաշի, կտանեմ տունը կդեղեմ, Ցեր կլավնա, ես խետը խաղ կանեմ։ Խոր ճարը կդրավ՝ համաձայնեց աղի ասածին, հ'իրան վրայից էլ գեջալիկը խանեց տվեց տղին, էն էլ կ'ուշը փաթթեց ըտու մեշն, դրեց բարթոցի խովը, հ'ինքըն էլ նստավ կողին, չուր հ'իրդուն։ Հ'իրդունը, որ բանթող արեցին, հ'ելան էտ կ'շին էլ առան հ'իրանց խետ էկան տունը։

Գիշերը Գառոն չքնավ. հ'իրա ուշքն ու միտքը էտ կ'ուշն էր։ Մեկ էլ էտ կ'ուշը, ասու հրամանով, լիզու առավ, Գառոյին կանչեց կուշտը ու ասավ.— Այ Գառո, ինչ որ կլսաս ու կտեսնաս՝ մարթու չասես չուր մեր սրտի մուրազը կատարվի։ Ես Արաբստանի թագավորի պըստի ազչիկն եմ, ընձի իմ խոր տնից Նադանասի դևը փախցրեց, բերեց դրեց մե մութը սեյնակ, օխտը կողբես զանեց դրռանը՝ ասավ.— Էտե կմնաս չուր լավ կշոշընաս, կպսակեմ իմ տղի վրեն. քեզի էլ խացն ու ջուրը հ'երթսեն կթալենք, որ չփախնես։ Ես շատ լացա, դառդ արի, համա ճար-ճամրախ չգթա ըտուց դուս գալու խամար։ Էտենց լալով քների, մեկ էլ մեկը հ'անգրճիս ասավ. «Սիրամարգ, Սիրամարգ, հ'ելի, օխտը օր, օխտը գիշեր ծունդր դիր, աղոթք արա, դու իսկական Սիրամարգի-խավ կդառնաս, էդ հ'երթսից կթրռնես կփախնես, համ էլ հ'իմաստուն կլնես»։ Զարթնա, հ'ելա չոքա ու ծունդր դրի չուր լուս։ Լուսը բացվի քու վրեն, որ բացվավ իմ վրեն, բերին ընձի հ'երթսեն խաց, ջուր, կերակուր թալին։ Ես չմոտկցա, չկերա, չխմա, հա էլ իմ աղոթքն արի, կեսօրին թաղա-դրուն ընձի խաց, ճաշ, միրք, ջուր բերին, հ'երթսից հ'իչցրին։ Ես ըտու վրեն էլ ուշք չդարցրի. չուր հ'իրգուն աղոթք անելով, ոնչ քուն, ոնչ զարթուն ի՝ մեկ էլ մեկն ասավ. «Գառո շան, քու ձենին նման էր, Սիրամարգ խաց կե, ջուր խմա, որ ուժ հ'լնի թրռնես, էթաս ծովերով դենը, թե չէ Նադանասին քու հ'եդևեն կհ'նգնի, կխասնի, քեզի կբռնա հետ կտանա, յա էլ կսրպանա»։ Հ'ելա, զաթի ըղտս-նղտս կդրեր էր, նստա մե կուշտ կերա, դրուստ ա, ուտում եմ. համա ուշս աղոթքն ա՝ յաման աստված, ինչ կլնի ընձի մե ջուխտ թև տաս, թրռնեմ հ'երթսից հ'լնեմ, էթամ կորեմ էս դև Նադանասու ձեռից պրծնեմ։ Էսենց մե օր, էրկու օր, իրեք օր, չորս օր, աղոթք արի, վրա խինդ օրվան նիգարանս կդրավ, ասի՝ «Հ'եսա խինգ օր ա աղոթք եմ անում, որ ասված լսեր, հեն ա կլսեր, մե ջուխտ թև կտար, ես կթրռնի կէրթի». մեկ էլ միտք արի, ասի էրազիս ասին, որ օխտ օր պտի ծունդր գնեմ նոր թև առնեմ, գիվա հ'նչեմ գոթուն անում. հ'ելա դրհա եռանդով կպա իմ աղոթքին։ Օխտ օրը որ թմամ՝ մեկ էլ էն տեսամ որ հ'երթսից մե լուս թռավ էկավ հ'նգավ

;իմ վրեն։ Էդ լուսն ինձի ասավ.— Հե՛լի թրոի փախի, ես քու թևերն եմ, թափ տու, թափ տու թրոի։ Ես կանչի իմ ասված, թևերս թափ տվի ու թրոա, մե դան ֆրոռացի էտ տան մեչը, հ՚երթսեն հ՚ելա ու փախա։

Շատ ի թրոե, քիչ ի թրոե՝ ասված դինա, մեկ էլ հ՚իշկամ հետ տենամ՝ մե կլոր բան հ՚եղևես խանքակտուր գալում ա· ասի՝ էսի կա չկա Նաոդանասու կնիկ Ջադուն ա, հ՚իմացե, որ ես փախեր եմ՝ հնգե հ՚եղևա։ Ես բանցրցա վիրև, մտա ամբերի մեչը։ Ջադուն էլ հ՚լավ վիրև, քանի էթում, մոտկնում ա ընձի։ Տեսա ցաձրը մեշա յա, թափ հ՚իչա մեշեն ու պախկվորա ծառների արանքը, Ջադուն էլ թափը հ՚իչավ, համա չկարցավ ընձի գթներ։ Ես ընդուն տեսնում ի, համա հ՚ինքը ընձի չէր տենում։ Կայնավ մե քանի դան բերնից կրակ փչեց էս յանը, էն յանը, ծառները վառվան, հ՚ինքը գիդում էր, թե ես էլ ծառների խետ վառվա, համա ես չվառվա։ Հ՚ինքը թողեց հ՚ռադ հ՚ելավ։ Ես մեջու մացի ըտե, նաֆաս առա, դինչրցա, մտածում եմ՝ «Թոնեմ էթամ մեր Արաբըստանի երգիրը՝ իմ խոր կուշտ»։ Համա ոնչ ճար գիդամ, ոնչ ճամբախ, եսիմ որդեղից եմ էկե, դոր եմ խասե։ Համա մե յանից էլ մտածում եմ՝ «Խո չեմ կանա ըստե մնա ջուն-ջանավարների փայ հ՚ընեմ»։ Տեսա կողես էլ արուն ա էթում, հ՚իշկեմ տենամ՝ թևիս տակը յարալու յա, դու մի ասա ամբերի մչից, որ թափ թռե էկեր եմ մեջեն, թևս զաներ եմ ծառի չոր ճղին, արե յարալու։ Էն վախտը, որ համ յարեն տաք էր, համ էլ Ջադուլի ախը սիրդըս էր, յարի ցավը չեմ հ՚իմացե։ Նստա ըստե մե կուշտ լացա, սիրտս դինչցավ, հ՚ելա, թևին տվի ու թրոա։ Թրոնում եմ, համա չեմ գիդում, թե դոր եմ թրոնում. յարեն էլ մե յանից ա ցավում, էնենց որ մե խելակ տեղ թրոնում եմ, հ՚իշնում դինչնում, էլի հ՚լնում յավաշ-յավաշ թրոնում եմ։

Էտենց մե օր, երկու օր, իրեք օր, մախլաս, չեմ գիդում քանի օր թրոա, չուր հ՚երեկ հ՚իրգուն անչաղ խասա ձեր արտը, ասի՝ «Թևումըս էլ ուժ չկա, հ՚իշնեմ ըստե քոլերի մեչը մնամ, տենամ ինչ ա հ՚լնում»։ Գիշերվա մե վախտ տենամ էլի էն ձենը ասավ՝ «Սիրամարգ, դու փրգըվար, հ՚առավոտ մե շատ բարեպաչտ մարթ հ՚իրա տղի խետ գալու են էս արտը քաղեն, ըտոնք քեզի կգթնեն ու կտանեն հ՚իրանց տուն, կպախեն։ Էդ տղին էլ կասես, թե հ՚իրան թքից քսա քու յարին, դու կլավնաս, ընդուց դենը սաբր արա չուր քու թախտը բացվի»։ Ըտու վրեն ես ուրխցա, չուր լուս մացի մտածելով։ Հ՚առավտուն դուք էկաք արտը քաղելու։ Մնացածը դու գիդում ես.

էլ ընձի բան չխարցնես և մարթու էլ բան չասես չուր իմ վագեն թըմմի։

Սիրամարգը էդ խոսքերն ասավ ու էլ ձեն ծպտուն չխանեց։ Գառոն տեսավ, որ Սիրամարգի հ'աշկերից արցունք թափավ, հ'ինքն էլ լացավ։ Հետո միտն հ'նգավ, որ հ'իրան թքով պտի Սիրամարգի յարեն լավցնա։ Հ'ելավ պարկավ, որ մեշու քնի։ Շատ էր քնե, քիչ, մեկ էլ մե բան հ'անգձի տակը ճըսճըստալեն ասում ա՝ «Գառո, Գառո, էլ չըզադընաս էտ կ'շի կշտից, էտի քու ղսմաթն ա»։ Հենց էտ վախտն էլ Գառոյի խերը Գառոյին ղարթնցնում էր, որ հ'լնին էթին արտը։

Գառոն զարթնավ, համա խորն ասավ.— Հայրիկ, ես էլ արտը չեմ գա, ես մնում եմ տունը իմ կ'շի կուշտը։ Բը, որ ես գամ էստուն կուտ ու ջուրը որը կտա։ Գառոն էլ, ձեն-ծպտուն չխանեց, թե գիշերը ինչ ա հ'ելե հ'նցե։ Խերը շատ զոռեց, համա Գառոն ջլերեն չհ'ելավ, նոր Գառոյի մերը ասավ.— Քա՜, չուր հիմի դու չիր տանում խետտ, հիմի էլ չես թողում էդ քյորփեն մեշու դինջնա։ Կնիկը էդ որ ասեց՝ Գառոյի խերն հ'ելավ մինակ գնաց, կնգան ասավ.— Ընձի կեսորին խաց կբերես։ Լա՛վ։

Գառոյի խեր որ գնաց, Գառոն հ'ելավ հ'իստկուկ ցորենը բերեց լցեց Սիրամարգի հ'առեչը, գնաց հ'ախպրից էլ պաղ ու զուլալ ջուր բերեց լցրեց քյասեն, դրեց կ'շի հ'առեչը, հ'ինքն էլ հ'ելավ մե լավ լվացվավ, խաց կերավ, էկավ հ'իրա թքից քսեց Սիրամարգի յարին. յարեն հ'ելավ մորե մեկ, լավըցավ։

Էտու վրեն Գառոն ուրխըցավ, հ'ելավ ախշրքովը մեկ, ուրախ-ուրախ վազավ մոր կուշտը, ասավ.— Ա՜յ մերո, ես իմ թքով կանում եմ յարա սաղծնեմ։ Ըստուց դենը ես իմ թքով յարա կսաղծնեմ, փարա կառնեմ, մենք լավ կարբենք։

Հ'նցավ մե առ ժամանակ, Գառոյի շնորքի խաբարը տարածվավ ախշրքովը մեկ, որտեղ մե յարոտ-փարոտ մարդ կար, գալում էր Գառոյի կուշտը մե ճար անելու։ Գառոն էլ չէր խնայում· վիրը փարով, վիրն անփարա, հ'իրան թքով դեղում, լավըցնում, ճամփու էր դնում։ Մե առ ժամանակից հ'ետո Գառոենք կարքին հարըստացան, խերը էլ էստու-էնդու տունը մշակութեն չէր անում, հ'իրանց օրվա աբրուստը գալում էր, հ'իրանք էլ ուտում- խմում, փառք տալում ասուն, գոհ հ'իրանց կյանքից աբրում ին։

Հիմի Գառոյին, հ'իրան կ'շին, խորն ու մորն թողենք ըստե, էթանք Ա՛ռաբըստան՝ Սիրամարգի խոր խողը։

Սիրամարգի կորելուց հետո Ա՛ռաբըստանի թաքավորը շատ ա

դառդոտում, միտք ա անում, թե հ'ինքը էտքան կ'ոչաղ, հարուստ թաքավոր հ'լնի, ՆաՀդանասին գա, հ'իրա սաՀից սիրուն ախչկան փախցնա տանա։ Մարթ ա քցում դոնեդուռ, մայլա-մայլա, բոռալ ա տալում, թե՝ «Աստված սիրող, էսենց մե խատ ախչիկ ա կորե, ասում են ՆաՀդանասին ա տարե, որը որ տեղն հ'իմանում ա, յա էլ չէ տեսեր ա, դա ընձի ասա, ընդու մուշտուվուղը կլնի, ինչ որ հ'իրան լիղուն պըտտա, հէ՞յ, հէ՞յ»։ Էսենց մե օր, էրկու օր, մե շաբաթ, էրկու շաբաթ, հ'առավոտվանից չուր հ'իրդուն աստված սիրող կանչեցին, մարթ-մադաթ դուս չէկավ, որ տեսած հ'լներ, յա էլ թե հ'իմանար, թե էդ ախչկան դոր են տարե։

Էտու վրեն տվեց, թաքավորը կրսկրծվորավ, սաղ շանը թափավ դուս, յարոտավ-դրոտավ հ'նդավ շլերը։ Ախչկա կորելու ցավը քիչ էր, էդ հ'իրա ցավն էլ մե յանեն էկավ հ'եվլցավ։ Թաքավորի սաղ տնեցիք, վաՀիր-վաքիլները մացին շիվարած։ Թաքավորը էլ չէր կանում դուս գար հ'իրա ժողովրթի հ'երեսը, վաՀիր-վաքիլներն էլ չին ասում, որ հ'իրանց թաքավորին էսենց մե ցավ ու փորցանք ա պատայել, դեղ ու ճար էլ չեն կանում անեն։

Մե վախտ էսենց որ մնաց, մեկ օր էլ թաքավորը խորըրթի կանչեց հ'իրա կնգան, ջոՀ ախչկան, մեկ էլ ջոՀ վաղիրին, ասավ.— Էսենց էրգիր կառավարել չլնի, մե մարթ գթեք թո էթա ախշար ման գա, բալի մե դեղից-բանից ճարա բերա, ես խմեմ, լավընամ, հ'լնեմ իմ թաքավորութենն անեմ, թե որ էտեաց մարթ էլ կհ'լնի, իմ խաղինի դոները բացեք, իշքան ոսկի, արծաթ, ագնեղեն կուզա՝ տվեք թո տանա, թաքիլան ընձի մե դեղ գթնի բերա։

Թաքավորի էս խոսքի վրեն մարթիք հ'նգան գես ու դեն՝ մե վալադ մարթ գթնելու։ Շատ են ման գալում էտ թաքավորութենի մեչը, վերչը, մե շայել տղա յա գալում թաքավորի պալատը և ասում.— Ես յա դեղը կճարեմ թաքավորի խամար, յա էլ մե լոխմանի հեքիմ կգթնեմ կբերեմ, համա, ինչ օր հ'ուզեմ՝ պտի տաք։ Թաքավորը որ լսում ա, ախշրքով մեկ ա հ'լնում, կանչում ա էտ տղին հ'իրան կուշտը ու ասում ա.— Ինչ որ քեզի հարգավոր ա, քու ճամփի խամար հ'ուզա՝ տամ, որ էս իմ խիվանդութենի ճարն էլ արիր, թաքավորութենիս կեսն էլ հ'ուզես՝ չեմ խնայի, համա, որ սուրթ դուս էկար, քեզի կգնդահարեմ։

Տղեն էր, հ'իրա կամքը հայտնեց, հ'իրա բեռը բռնեց, խեճավ թաքավորի ձիանքից հ'մնից լավ ձին, գլուխը թեքեց դրրա արևելք ու հայդա՞։ Լա՛վ։

Թաքավորը ըստե թո մնա յարոտ-փարոտ, էս տղեն թո գնա հե-

քիմ գթնելու, մենք էլի խաբարը տանք Գառոյից, մեկ էլ Սիրամարգից։

Էն օրվանից Գառոն, որ կանում ա հ'իրա թքով յարա լավրցնել՝ էտ օրվանից ընդու անունը դնում են Լոխման-Գառո։ Լոխման-Գառոն հ'իրա գործը շարունակում ա, համա սիրտը տխուր ա, չումքի Սիրամարգի վրեն էնենց ա տաքցե, համա ի՞նչ անա, որ Սիրամարգը անլիղու հայվան ա։ Լոխման-Գառոն գիշեր-ցերեկ Սիրամարգի խետ ա, բան ա, որ հ'իրանը կանչում են մե խիվընգի վրա, յա չէթում, յա էլ, որ շատ դժար խիվանդ ա հ'ըլնում, Սիրամարգին հ'իրան խետ տանում ա։ Ըդրա խամար էլ մե խատ լավ ղաֆաս ա տալում շինել, էտ ղաֆասով Սիրամարգին հ'իրան խետ տանում ա։

Մե յանից էլ Լոխման-Գառոն Սիրամարգին շատ խեքաթներ ա ասում (Սիրամարգը խասկնում ա, համա չի կանում խոսա)[1], որ չտխրի։ Ասում ա, որ հ'ինքը փարա պտի ժողվա ու Սիրամարգի խետ էթա Սիրամարգի խերանց էրգիրը՝ Ա՛ռաբստան։ Գառոն թայմներ էր, համա որ խոսք 'ր բացում Ա՛ռաբստանի էրգրի մասին, Սիրամարգը ուրխնում էր՝ հ'իրա նխշուն թևերը թափ տալում, թոնում վեր, թոնում ցած, դես էր հ'նգնում, դեն էր հ'նգնում, վերջն էլ գալում էր նստում Գառոյի հ'ուսին, թևերը բացում փաթրթվում էր վըզովը ու հ'աչկերից ուրախութենի արցունք էր թափում։ Գառոն էլ բռնում էր մաժում-շոյում, խետը խաղում-խաղում, պաչում թևերը, գլոխը, կտուցը. մե խոսքով սիրտը շայում էր։ Գառոյի խերն ու մերն էլ ղաթի սորվեր ին էդ կ'չին, խելքամաղ ին հ'ըլնում։ Էտոնը էլ թո հ'իրանց խամար աբրեն, մենք խարարը տանք Նա՛ռդանասուց, հ'իրա Ջադու կնգնից։ Լա՛վ։

Ջադուլին որ չըհաչողվում Սիրամարգին բռնել, էն մեջի մեչը, թողում քոռ ու փոշման հետ ա գալում հ'իրա մարթի կուշտը։ Մարթն էլ հերսոտում, կադղում, ջո՛ղ-ջո՛ղ քարեր վերցնում ջպռտում ա դես ու դեն, էտ քարերն էլ էթում են Ա՛ռաբստանի խողում մե խատ լայ հ'ախպուր ա հ'ըլնում, թափվում ա հ'ախպրի դեմը։ Քարերը, որ լըցվում են հ'ախպրի դեմը, ըտե շուրը գոլում ա, հավաքվում հ'ըլնում լցվում ա էս յանը, էն յանը։ Դու մի ասա՝ էտ հ'ախպրի կշտին մե խատ շամխար օց ա աբրում հ'իրա ճտերով. էտ օցը Նա՛ռդանասու կ'ուլն ա հ'ըլնում, ջուրը հ'ըլնում լցվում ա էդ շամխար օցի բունը, խեղճը անչաղ առնում հ'իր ճըտերը փախնում ա էտ տեղերից։ Հ'ախպրից էլ մեջու ցածր մե խատ ղիթոնի ծառ ա հ'ըլնում, որը

---

1 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

հ՝իրա ջուրը էդ հ՝ախպրից էր առնում։ ՆաՀդանաՀսու թալուկ քարերը որ լցվում են հ՝ախպրի դեմը, էտ խեղճ զիթ՝՝՝ ծառի քոքն էլ ջրի հ՝երես չտենում ու սկսում ա չորնալ։ Զիթոնի ծառն էլ ՆաՀդանաՀսուն ա հ՝լնում։ Ըտու տակ ՆաՀդանաՀսըն գալում գնշընում էր։ Լա՛վ։

Կ՝ոչաղ-տղեն հ՝լնում ա ձին քշում ա դրա արևելք, համա չի հ՝իմանում դոր էթա, որ հ՝իրա թաքավորի խամար դեղ ու ճար գթնի ըերի։ Հ՝իրա մտքերի խետ, ձինը խառը քշած դալում ա-գալում, տեսնում մե խատ բանցըր, բոյով, շատ խիտ ճղներով զիթոնի ծառ, համա էտ ծառը չորնալու վրա յա. մտածում ա. «Յարաբ, էս լավ ծառին ի՛նչ ա հ՝ելե, որ առե չորնալ, մարթ հ՝իմանա՝ ըտու դեղն էլ անա»։ Մեկ էլ, էտ ծառը ճրռռաց, յավաշ ասավ.— Կ՝ոչաղ-տղա ջան, ես քու բարի միտքը խասկըցա, ասված բարին տա։ Որ էտենց բանցրնաս-հ՝լնես վիրև, ընդե մե խատ հ՝ախպուր կա, էտ հ՝ախպրի դեմը կգրեր են, էլ ջուրը դեսը չգալում, որ իմ քոքը ջրվի, ես էս արևի տակը խաշվում եմ (ծառը ղաստու չասավ ՆաՀդանասին ա էդ քարերը լցե, որ տղեն չվախենար)[1], որ էթաս էտ ջրի ճամփեն բացես, ջուրը կուգա, ես կշրվեմ ու թազա-դրուն կկանչնամ, քեզ էլ փորցանքից զադը կպախեմ։ Տղեն էր, էլ ըսկի չըկայնավ դիրջնալու, հ՝ելավ խեճավ ձին ու գնաց դրբա հ՝ախպուրը։ Մե խելակ տեղ գացեր էր մեկ էլ բոռբրոնցն հ՝նգավ էտ ձորերը[2]։ Դու մի ասա՝ ՆաՀդանասին հ՝իմանում ա, որ էտ Կ՝ոչաղ-տղեն էթում ա Լոխման-Գառոյի կուշտը, ըտու խամար էլ բոռում ա, որ զիթոնի ծառը ըտուն բռնա, չուր հ՝ինքը գա, ասում ա.— Այ ծառ, քոքտ չորնա, չե՞ս տեսնում, որ էտ Կ՝ոչաղ-տղեն էթում ա Խայոց-տունը, որ Լոխման-Գառոյին տանա Ա՛ռաքստանի թաքավորին՝ Սիրամարգի խորը լավցընա։ Ըտե Կ՝ոչաղ-տղեն մատը կծում ա ու գլխի հ՝նգնում, որ էտենց հեքիմ կա, համա պտի էթա զթնի։ Զիթոնի ծառը ասում ա.— Հ՝նչի՞ բռնեմ, հենա էթում ա հ՝ախպրի ջուրը կապա դեսը, որ իմ քոքը ջուր խմա, ես թազադրուն կանչնամ, համա դու քարեր լցիր հ՝ախպուրը, ջրի ճամփեն կդրիր, էլ հ՝նչի պտի ես քու խոսքն անեմ։

Կ՝ոչաղ-տղեն էտենց ձինը խառը քշելով էթում ա, մեկ էլ տեսնում ա ձինը կայնավ, էլ չըէթում, տղեն զանգուլում ա, ձին տեղից ժաժ չըգալում, պլեթը քաշում ուզում ա ձիանը զանա, մեկ էլ հաշկը հ՝նգնում ա մե փելփրլուն, հ՝երգեն բանի, էլ ձիանը չը զանում՝ ա, կայնում թաղաշ անում, տեսնում ա մե սիրուն-նխշուն շամխար օց

---

1 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

2 ձ-ն հնչվում է շնչեղ (Ս. Կ.)։

վռազ-վռազ գալում ա թրխ հ՝ինքը, տղեն ձեռաց ձիանից հիշնում ա, ձիան վիզը, փորը, մեշկը մաժում-տրորում ա, որ զոռով հ՝ուզում էր քշեր, չուր օցը գալում, մոտկնում ա, կայնում ա պոչի վրեն, գլոխ տալում, բարակ ձենով տղին ասում ա.— Կ՝ոչաղ-տղա, ասված քու մուրազը կատարա, դու որ էթում ես հ՝ախպրի ջրի ճամփեն խորթելու, էնդե ջոջ-ջոջ քարեր են հ՝նգուկ, հիմի քու ուժը չըպատա, որ էտ քարերը խանես, դու պտի հ՝առեչ էտ հ՝ախպրի ջրի մեչը լավ լոխկնաս, նոր քու ղուվաթը տաս-քսան դան կհ՝ավլնա, հետո կանաս խանես, չըմոռնաս ձիանն էլ լոխկըցնել, ընդու ուժն էլ կհավլնա։ Էտ հ՝մմեն որ կանես, հ՝ախպրի էն յանը իմ հ՝առչվա բունն ա, որ հիմի ջրով-տլով լցվեր ա, քեզի մինաթ կանեմ, որ էթաս էն էլ թամզացնես, չուր ես էթամ ձաքերը, քոչն ու բարխանեն առնեմ գամ, քեզի կասեմ, թե իմալ պտի էթաս խայոց-տուն, Լոխման-Գառոյին գթնես, տանես Ալաբբստան։ Դև Նառդանասուց էլ չվախենաս, հիմի կգա իմ վրա կբռռբռա, թե ես հ՝ենչի քեզի չբռնի։

Շամխար օցի խոսքը հըլը բեյնումն էր, մեկ էլ էն յանեն Նառդանասու ձենը էկավ որ կանչում էր.— Շամխար օց, Շամխար օց, էտ Կ՝ոչաղ-տղին բռնա, չուր ես գամ խասնեմ, ըտու ջոչ կտորը հ՝անգաճը թողեմ, էն չորաքոք զիթոնի ծառը չբռնեց, բալի դու բռնես։

Շամխար օցն մեկ խատ որ ֆչչըցրեց Նառդանասու յանը, էտ դար ու դաշտ սաղ փուշ ու տատասկ հ՝ելավ, որ դևի ճանփեն հ՝ելելի դըժարացավ, էր չկանա ջուտ մոտկնա, ասավ.— Անիծուկ դև, հ՝ենչի էս բարի մարթու ճանփեն փակեմ, հ՝ինքը էթում ա հ՝ախպրի ջրի ճանփեն բանա, որ իմ բունն էլ թամզացնա։ Դու ընձի իմ բնից խանիր չոլերը քցիր, ջուրն ու տիլը էկավ լցվավ, մեր բունը, մանդր ձաքերս անջախ փախցրի, խոքիքն աղատի, հիմի դու ուզում ես, որ ես հ՝ենեմ ընդուն բռնեմ։ Չէ՛, կանաս դու հ՝արի բռնա։

Կ՝ոչաղ-տղեն էտ էլ որ հ՝իմացավ, գրհա սրտապնդավ, հ՝ելավ խեձավ ձին ու թրռավ դրբա հ՝ախպուրը։ Տղեն էլ, ձինն էլ քանի մոտկընում ին հ՝ախպրին, էնքան շատ ին ծարվընում։ Քշեց-քշեց, կես օրվա վրա խասավ հ՝ախպրին, խառնելու քիմին տղեն ձիանից հ՝իչավ, ուզում էր ջուր խմել, մեկ էլ հ՝ախպրի ակից մե խրոռտ ձեն լսավ.— Խա՜ն, խա՜ն լոխկցի, համա ջուր չխմես, ձիանն էլ ջուր չտաս, չուրքի չես լոխկնա, ուժ չես ժողվի էս քարերը աթլես դեն, որ էս կեխտոտ-գրոռոտ ջրերը էթան իմ ակն էլ կբացվի, նոր հալալ-զուլալ ջուր կխմես, կխորոտնաս, ուժտ էլ կհ՝ավլնա։

Կ՝ոչաղ-տղեն էտ որ լսեց, չնայած ծարավից պապընձվում էր, ձինն էլ հ՝իրա խետ, համա հ՝ինքը հ՝իրանը զսպեց, հ՝իրան կ՝այիշն

էլ հ՚րցկեց, ձիան մրոուքը կապեց, որ թավաքալի ձին, դե անլիզոռ հայվան ա, չըխասկնում ա, ջուր չըխմա, էտ ջրից որն էլ որ խմեր, կթալեր։ Հ՚իրան բերան էլ լայլըղով կապեց, որ լոխկնալու վախտը թավաքալի ջուր չէթա բերանը։ Ձիան նոխտից բռնած վախվըխելով մտավ էտ գրոռտ ջուրը։ Տղեն ջուր մտավ չմտավ, ջուրն ըսկսեց եռալ, էտ ջրի մեչը էլ կարիճ, էլ մողոզորիկ, էլ ջոչ-ջոչ գորտեր, էլ կ՚արաքիշիկ, խազար ու մե անիծուկ ջուն-ջանավարներ ու սատանեք հ՚ելան ջրից, փախան դես ու դեն։

Տղեն ու ձին լավ լոխկցան, անփորցանք ջրից էնա ուզում ին դուս դալ, մեկ էլ Նաադանասին էն յանեն բոռաց.— Ա՞յ հ՚ախպուրքու ակը քոռնա, հազը էտ տղեն մտե ջուրը. յա ըտուն խեխտա, յա էլ թո մեշու ջուր էթա ըտու բողազը, էտի տեղնուտեղը թալա։

Հ՚ախպուրն ասավ.— Էսքան տարի իմ ակի դեմը բռնիր. իմ չորս բոլորը ճըմճըմա իր արե, հազար աղուլով օց ու կարիճով լցեր իր իմ ակը, «լավուբենիտ» խամա՞ր բռնեմ խեղտեմ էս լավ տղինչեմ անի, ինչ ուզում ես, արա։ Ըտե Նաադանասին թողեց կուրավ-լա՚վ։

Կ՚ոչաղ-տղեն սրդապնդավ, ջրից հ՚ելավ, ձինն էլ խետը քաշեց արևի տակը, լավ չորացան, տղեն տեսավ, որ հ՚ինքը շատ ա ուժովացե, ձինն էլ։ Կ՚ոչաղ-տղեն ձիանը հ՚երուքեց հ՚ախպրի կշտի չայրը արածալու, հ՚ինքը հ՚ելավ կպավ հ՚ախպրի դեմը լցուկ քարերին ու մեկ-մեկ խանեց թալեց կողի ձորը։ Խանեց-խանեց, չուր արևմտոց, հ՚ախպրի դեմը լավ թամըզցրեց, կեխտոտ-գրոռտ ջրերը սաղ գացին, հ՚ախպրի ակը բացվավ, պաղ-պաղ կապուտ ու զուլալ ջրերն էկան, հ՚նլած, մացուկ ախպն ու կեխտն էլ սրփին տարան։ Նոր ըտե հ՚ախպրի տակից զրընգան ձենը լսավ.— Կ՚ոչաղ-տղա, հիմի իմ զուլալ ջրից ինչքան ուզում ես խմա, քեզ էլ խալալ, քու ձիանն էլ։ Կ՚ոչաղը գնաց ձին բերեց, էրկսով էլ կուշտ-կուշտ խման լավ, ծարվընները կոդրավ, տղեն հ՚իրա խուրջինը բացեց, անոթի էր, նըստավ մե կուշտ էլ խաց կերավ, հ՚ելավ գնաց էն Շամխար օցի բունը գթավ, տլից-ճըճեղից թամըզցրեց. արթեն մութն էր, մղրեբ տվեր էր վրա, հ՚ինքն էլ նեղացուկ, գլոխը դրեց ձիան այարին, հ՚ախպրի ճըլճըլոցի տակը քնավ, ձիանն էլ թողեց արածալու։ Ձին արածաց, կշտըցավ, գնաց տիրոջ կուշտը կայնավ։

Հ՚առավոտուն արևի հ՚ըլնելու խետ, Կ՚ոչաղը խազար ու մե երուն թռչունների ճըլվըլոցից զարթնավ, հ՚ելավ նստավ, հ՚իրանը մե խատ ժխշեց, տեսավ դրհա յա ղուվաթովցե։ Շամխար օցն էլ հ՚իրան ճտերով էկե նստե տզի կողին, մուղաթ ա մնում, արևի շողքն էլ հր

հ'նգել էր օցի ու հ'իրա նխշուն ճտերի վրա, սաղ փելփելում, պըսպրղում ին։ Էտ թռչուններն էլ հավաքվեր էկեր ին թամըղցուկ հ'ախպրից ջուր խմելու, էլ լոր, էլ կաքավ, էլ զմրուխտ կ'ուշ, էլ սարեկ, էլ եղունեկ, էլ օրդակ, էլ ձկնկուլ, մախլաս, ախշրքի տակը ինչքան լավ կ'ուշ ու կ'անադա կա, ժողվեր ին էտ հ'ախպրի վրեն, ջուրն առնում ին կտուցները, հ'իշկում երգնքին, փառք տալում ասուն. Կ'ոչաղ-տղին հերգեն արև ուղում։

Շամխար օցը, որ տեսավ տղեն զարթնավ, ասավ.— Բարի, Կ'ոչաղ տղա, հ'ելի էթանք իմ տունը, ես քեզի կասեմ, թե իմալ էթաս, դոր էթաս, որ Լոխման-Գառոյին գթնես բերես։ Մե խատ Զմրուխտ կ'ուշ էլ էկավ ասավ.— Ես վիրևից թռնելով չուր խայոց տան սայմանը քու խետ կգամ, ճամփեքը նշանց կտամ, ընգունց դենը իրավունք չէ, թե չէ չուր վերչը քու խետ կգի։ Տղեն էր, ձին քաշելով հ'նգավ Շամխար օցի հ'ետևն ու գնաց ընդու բունը։ Օցը բերեց ըտուն լավ պատիվ տվեց, ձիանն էլ գարի ու ասավ.— Ըստուց գլնես կէթաս դեմ արևելք, էլ Նառդանասին քեզի չը կանա խասնի, ես, զիթունի ծառը, հ'ախպուրը ու մեկ էլ էսքան երուն թռչուն ղարավուլ կըքաշենք, չենք թողի, որ գա խասնի քե, համա թավաքալի, բան ա, թե որ պոծնի գա՝ ա՞ռ էս իմ խին շապիկը, դի շլապկիտ մեչը, որ նեղն հ'գնես՝ վառա, ես քու կուշտը կհ'լնեմ։ Զմրուխտ կ'ուշն էլ հ'իրա բընբլից տվեց, ասավ.— Քանի մեր խոզի մեչ ենք, ես քու խետ եմ, քեզի փորցանք չըպատայի, խայոց խեղում որ պետք գա, էտ բընբուլը քցա կրակը թո վառի, ես իմ կ'շերով կգամ քեզի քյոմակ։ Լա'լ։

Ըտե տղեն հ'մմնից էլ շնորակալ հ'ելավ, մնաս բարով արավ, հ'ելավ խեձավ հ'իր ձին, հ'երեսը դարցրեց դըբա արևելք, խաչակնքեց, կանչեց հ'իր աստված ու ձիան գլոխը բաց թողեց, թե խայոցտուն դռ՞ր ես, ես էկա։

Կ'ոչաղ-տղի խետ, վիրևով թըռնելով էթում էր Զմրուխտ կ'ուշը և որդե որ մե վտանգ էր հ'լնում՝ հ'ինքը Կ'ոչաղ-տղին հ'իմաց էր անում, էն էլ յա զոռով, յա էլ ջանվերթուխունով գալում հ'սնում ին։ Գալում են, գալում, մե օր, էրկու օր, իրեք օր, մե շափաթ, մե ամիս. սարերով, ձորերով, դուրներով, վերչը անփորցանք խառնում են խայոց տան սայմանը։ Ըտե Կ'չաղ-տղեն ձիուց հ'իշնում ա, Զմրուխտ կ'ուշն էլ հ'իշնում մե ջոչ քարի վրա, լավ դինջնում են։ Բերում հ'իբար խետ խաց-մաց են ուտում։ Զմրուխտ կ'ուշը Կ'ոչաղ-տղին ասում ա.—Իմ վախտը թըմմավ, ես էլ իրավունք չունեմ սայմանը հ'նցնեմ էն յանը։ Հիմի դու ըստեղից գլնես հ'երեստ էլի կանես արևվելք ու կէթաս, մե էրկու օր որ էթաս, դու կհասնես խայոց տան ջոչ

սարին, հ'իրանք էտ սարին Մասիս են ասում, էտ սար սուրփ ա, ըտու գլխին նստուկ ա Նոյա տապանը։ Դու որ հ'առչի դան կտենաս էտ սարը, իրեք դան խաչ խան հ'երեստ, որ քու գործը հաջողակ հ'լնի։ Էտ սարի փեշերումն արրում ա Լոխման-Գառոն, որ վիրը խարցնես, քեզի նշանց կտան, կէթաս, կգթնաս։ Լա՛վ։

Ըտե հ'ելան, Կ'ոչաղ տղեն ու Ջմրուխտ կ'ուշը բարեմնա հ'ելան. տղեն խեճավ ձին, հ'երեսը թեքեց արևելք, Ջմրուխտ կ'ուշն էլ բանցրցավ վիրև, գլոխը թեքեց արևմուտք, հ'ելավ ամբերից վերև ու տղի հ'աշկից կուրավ։ Լավ։

Կ'ոչաղն էր, գիշեր-ցերեկ մեկ արավ, ձին քշեց, ասենք ձինն էլ հ'իմաստուն էր, որ մոտկցեր ին, ֆայմում էր ըտու խամար էլ, էլ չէր կայնում։ Մինակ մեկ-մեկ կայնում ին խաց ու շուր ուտելու, խմելու, էլի հ'լնում հ'նգնում ին հ'իրանց ճամփեն։ Մե օր, մե գիշեր էկան վրա եկրորդ օրվա հ'առավոտ, լուսը որ բացվավ, արևն առավ, Կ'ոչաղը գլոխը բանցրցրեց, հ'իշկեց հ'իրա հ'առեչը, տեսավ մե ջոչ-ջոչ սար, ամբերն էկե փաթե սիպտակ գլոխը արևի շողքի տակ խաղար հ'ռանգի փելփրլում ա ու պրսպզում ա. էտե տղեն ալրիալը գլխի յա հ'նգնում, ասում ա՝ «Էտի կա, չկա Մասիս սարն ա»։ Ջեռաց ձիանից հի'չավ, լվացվավ, իրեք դան խաչ խանեց հ'երեսը, նստավ խաց կերավ, նոր հ'ելավ էլի հ'նդավ ճանփա։

Կեսօրվա մոտ էր, Կ'ոչաղը տեսավ դեմի ձորից մուխ ա հ'լնում։ Ձին դեմ արավ էտ մխի յանը ու քշեց էկավ, որ մոտկցավ, տեսավ որ էտ ձորում մե շոչ գեղ ա, որ թունդրրները նոր վառեր են. քշեց էկավ գեղի մեչ մե խատ խալիվորի պատայավ, ձիանից հ'իչավ, բարով տվեց ու խարցրեց.— Դու չե՞ս գիդում, էս յաներում, Լոխման-Գառո են ասում, դոր ա. ես ըտուն պտի գթնեմ։ Խալիվորը, տղին մե լավ վարաուրգ արավ, տեսավ վտանգավոր մարթ չէ, հ'ինքն էլ կ'արիբ ա էրեվում, ասավ.— Ըստուց մեկ օրվա ճամբախ ա, որ ձինըտ լավ քշես, էլի էտենց դրբա արևելք, Սևանա ծովի կ'րաղներում ա արրում, ընդերանք, որ վիրը խարցնես, քեզի նշանց կտան։ Հիմի նեղացուկ ես էրեվում, էթանք տունը, գինշրցի, խաց կե, ձինն էլ թո դինջընա, գարի ուտա, նոր հ'ելի կանչա քու ասված ու գնա։ Ըստե, Կ'ոչաղը շնորակալ հ'ելավ, ասավ.— Ես վրոազն եմ, ընձի Արաբստանի թագավորն ա ղրկե, քանի կանամ շուտ պտի խասնեմ մե լուր տանեմ. ասավ, մնաս բարով արավ ու ձին քշեց խալիվորի նշանց տված ճանփով։ Լա՛վ։

Տղեն թո գա, հիմի տենանք Գառոն ու հ'իրա Սիրամարգի-հավն իմա՞լ են, ի՞նչ են անում։

Գառոն ու Սիրամարգի-խավը էտ միջոցին բետցեր ին. Գառոն ջոչ տղա է գարցե, Սիրամարգի-խավն էլ բետցե, փոփոլացե, խորոտցե, կոկոլացե։ Գառոյի խերն ու մերը հ'մըն օր Գառոյին ասում են.— Այ որթի, հ'արի քեզի կարքենք, հիմի, փարք ասսու, մեր հալը լավ ա, դու էլ խասեր ես, մեր հայ-հայ գացե, վայ-վայն ա մացե. հ'աշկ ու հ'երես սիպտկե, քեզի անջազ շոչըցրինք, մենք հ'էսօր կանք, հ'եքուց չկանք։ Վիր ախչիկը դուրըտ դալում ա, էթանք ուզենք քեզի խամար։ Համա Գառոն, հե'չ դլոխ դեմ չէր տալում, խորն ու մոր վրեն նեղանում էր, թե ես չեմ կարքվում, ախշար չեմ հ'նգնում։ Էտ թավուր կ'սա որ Սիրամարգի-խավի կուշտն էր հ'լնում, էտ խեղճը տխրում, ճլորում մնում էր, համա Գառոն, հ'իրգունները, որ մնում ին մինակ, ասում էր.—Հ'ասա փարա-մարա եմ հալաքում. որ քու խետ էթանք քու խոր տունը, բալի քու սրտի խորուրդն էլ կատարվի, ես քեզի կառնեմ։ Նոր ըտու վրեն էտ Սիրամարգը ուրխնում էր, հ'ըլնում հ'իրա թևերով փաթըթվում Գառոյին։

Էտ օրը, Կ'ոչաղ-տղեն, որ պտի գեր ըտոնցը գթներ, հ'առավոտը, որ տղեն զարթնավ, տեսավ Սիրամարգի-խավը հ'իրան թառից թռե, էկե նստե հ'իրան բարցին ու կըվկվում ա, համա բան չը խասկցվում։ Գառոն, որ զարթնավ, ըտուն առավ հ'իրա դոշին խետը խաղաց, ասավ.— Շուտով կէրթանք Արաբըստան։ Գառոյի էտ խոսքի վրեն Սիրամարդի-խավի լիզուն թազա-դրուն բացվավ, ուրախ-ուրախ ասավ.—Գառո ջան, հ'եսօր ա, հ'եքուց ա, մեր տունը մե խաս կ'արիր մարթ պտի գա, էտ իմ խոր կշտիցն ա գալում, գիշերը մե էրազ տեսա, մե խատ մարթ բոզ ձիով էկավ, ասավ.— Գառո. Սիրամարգ, բոլ ա մնաք ըստե, հ'ելեք էթանք Արաբըստան, քու խերը հիվանդ ա, Լոխման-Գառոն պտի լավացնի։ Ընձ էլ ասավ.— Քու լեզուն բացվում ա, համա մինակ Գառոյի խետ խոսա, հ'ուրիշների դեմն էլ չխոսաս, չուր խասնես քու խոր տուն՝ ընդե դու կդառնաս էլի ախչիկ-Սիրամարգը։

Էտ խոսքի վրեն Գառոյենց դուռը տփին. Սիրամարգը թռավ հ'իրա թառը, Գառոն էլ հ'ելավ վռազով շորերը խաքավ ու վազավ դուռը բանալու։ Գառոյի խերն ու մերն էտ օրը գիշերը մացեր ին կալը։ Գառոն դուռը բացեց, տեսավ մե բոզ ձիավոր, առնաուդ մարթ ա դուռը տփողը։ Գառոն, որ դուռը բացեց, էտ ձիավորը Գառոյին տեսավ թե չէ, ձիանից ցած թռավ, գլոխ տվեց, կայնավ։ Գառոն ասավ.— Ի՞նչ մարթ ես, ես տեսնում եմ, որ դու մեր յաներից չես։

Կ'ոչաղ-տղեն, Գառոյին ալբիալը ճանչըցավ. ասավ.— Ես Արաբըստանի թաքավորի հ'ղրկած մարթն եմ։

Ծոցից մե խատ բոլանդե մանիք խանեց տվեց Գառոյին, ասավ.— Էսի իմ թաքավորի խալաթն ա, որ հ'ղրկել ա քեզի, համ էլ շատ բարով էր անում ու խնթրվում էր, որ գու հ'լնես իմ խետ գաս էթանք Ուրարբստան, չուրքի էտ մարթը հ'եսա քանի տարի յա յարոտ-փարոտ հ'նգե ջլերը, ախշրքի տակն էլ դեղ ու դարման չմացե, որ ըտու վրեն չարինք, համա չլավնում. նոր սալդ-սուլուղով ես էկեր եմ քու դուռը, քեզի գթեր եմ. հիմի պտի հ'իբար խետ էթանք Ուրարբստան, դու պտի մեր թաքավորին լավբցնես։

Ըտե, ձեռաց Գառոյի միտն հ'նգավ Սիրամարգի տեսած էրազը, ասավ.—Ղարիբ ախպեր, հլը ձինտ քաշա թավլեն, դու էլ ճանփից էկուկ նեղացուկ կհ'լնես, հ'արի վիրև, դինջբցի, չուր իմ խերն ու մերն կալից դան, ընդոնց կամքն առնենք, մեր ճամփի թադարուքը տենանք, հ'լնենք էթանք։ Սիրամարգի մասին բան չասավ։ Լա՛վ։

Տարավ ձիանը տեղավորեց, էկավ տղին առավ գնաց վիրև, նստան, խաց-մաց կերան, հ'իրարուց խարց ու բարով արին, Կ'ոչաղ-տղեն պատմեց, թե Նառդանասի դևը իմալ ա թաքավորի պտի ախչկան փախցրե ու չուր հիմի էլ սալբդ տվող չկա, ըտու վրեն էլ թաքավորը թասա արավ, դառդոտավ, յարոտավ-փարոտավ, հ'նգավ ջլերը։

Գառոն էլ շատ ցավաց-ափսոսաց, հ'ելավ էտ տղի խամար տեղ չինեց, ասավ.— Դու քնի դինջցի, ճամփից էկուկ ես, չուր հ'իրգուն ասված օղորմած ա, տենանք իմալ գլնի։

Կ'ոչաղ-տղեն որ քնավ, Գառոն հ'ելավ գնաց Սիրամարգի կուշտը ըսկսեց պատմել էն ինչ որ լսեր էր Կ'ոչաղ-տղից, համա Սիրամարգը թրռավ նստավ Գառոյի հ'ուսին, հ'անգճին, ասավ.— Ըտոնք հ'մմեն էլ ես գիդում եմ (հ'ինքը հ'իմաստուն էր)[1], ընձի ասա, ե՛փ ենք էթում։

Չուր հ'իրգուն Գառոն ու Սիրամարգը հ'իբար խետ ջան ասին, ջան լսան, սլան քաշին, թե իմալ պտի էթան Ուրարբստան. հ'իրիգուն Գառոյի խերն ու մերն էկան, Գառոն գնաց ըտոնց օթաղը, կայնավ խոր ձեռը պաչեց, կզավ մոր ծիծը պաչեց, ասավ.— Այ խեր, այ մեր, Ուրարբստանի թաքավորը դժար խիվանդ ա, իմ հ'եդևից մարթ ա հ'ղրկե, որ ես էթամ ըտուն լավբցնեմ, թաքավորի կյանքը փրգեմ։ Հիմի ձեր կամքն եմ խարցնում. ուզում եք դուք մացեք ըստե, ես առնեմ Սիրամարգին, էթամ, յա կգամ, յա էլ ձեզի կտանեմ, մե խոսկով, ես ձեզի չեմ թողի մինակ։

---

1 Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

Գառոյի խերն ու մերը սվտա շատ լաց հ'լան, դեմ ու դարց ա-
րին, համա տեսան որ Գառոն կայնե հ'իրան խոսկին ու պտի էթա,
հ'իրանց կամքը տվին, օրշնիտքն էլ խետը, ասին. «Դու գնա, որթի,
մենք մեր խոզ ու ջուր չենք թողի հ'նգնի չոլերը, բարով-խերով դու
գնա, տես ինչը ինչոց ա, նոր էն վախտը կտեսնանք ինչ անենք»։

Մեկել հ'առավտուն հ'ելան հ'իրանց թադարուքը տեսան՝ ճանփի
պաշար պադրաստեցին, Կ'ոչաղ-տղեն մե տորրակ ոսկի տվեց Գա-
ռոյի խորը, ախպըրացավ Գառոյի խետ, հ'ելան խեձան ձիանքը,
Սիրամարգին էլ կ'աֆասից խանին, կանչին հ'իրանց աստվածն,
հ'երբսները գարցրին դըրա արևմուտք ու գացին։ Լա՛վ։

Շատ գացին, քիչ գացին, ասված դինա, չուր խասան սայման-
էտե ձիանքից հ'իչան, Սիրամարգն էլ կայնավ մե քարի վրա, լվաց-
վան, խաց-մաց կերան, հ'ետ դարցան հ'իշկացին դըրա արևելք, Մա-
սիս սարին տեսան, իրեք դան խաչ խանին հ'երսներն, նոր հ'ելան
խեձան ձիանքն ու գացին։ Ճամփին, Սիրամարգից գոխտուկ, Կ'ո-
չաղ-տղեն, հ'իրա գլխի էկածները մեկ-մեկ պատմել էր Գառոյին,
էտու խամար էլ խորուրդ արին, թե որ յանով էթան, որ էլ Նադա-
նասուն չպատայեն, ընդու փորցանքներից ղադր մնան։ Մտածին-
մտածին, որոշին հ'ուրիշ յանով էթան, բալի պրծնեն Նադանասու
փորցանքներից։ Համա Նադանասին էլ, հ'իրա կնիկ Ջադուն էլ շատ
սատանա ին, ձեռաց հ'իմացան, որ Գառոն, Կ'ոչաղ-տղեն, մեկ էլ
Սիրամարգը Խայոց-տնից գալում են հ'սնեն, էթան Ագարբստան։

Գառոն, Կ'ոչաղ-տղեն էտենց գացին-գացին, մե օր, էրկու օր,
իրեք օր, մե շափաթ, էրկու շափաթ, վերջը խասան մե անապատ-
ապառաժ տեղ, արևը վառում ա, ոնչ ջուր կա, ոնչ կանանչ, ծա-
ռավից ու շոքից մեռնում են։ Մեկ էլ Սիրամարգը վիրևով թրռնե-
լու վախտը, տեսնում ա մե ջայել, կանանչ զիթոնի ծառ, էտ որ տե-
նում ա՝ գլոխը դարցնում ա էն յանը։ Գառոն մնում ա զարմացած,
թե էս հ'նչի՞ Սիրամարգը հ'իրան ճանփեն փոխեց, հ'իրանք հըլը
զիթոնի ծառը չին տեսնում, ղաթի Սիրամարգն էլ Կ'ոչաղ-տղի կուշ-
տը իրավունք չուներ խոսալու, ըտու խամար էլ սուս-փուս գլոխը
թեքեց գըրա ծառը, որ տղերքն էլ հ'իրա հ'ետևից էթան։ Լա՛վ։
Դրուստ որ, տղերքը ձիանքի գլխները թեքին կ'շի հ'ետևից, խառը
քշեցին. մեկ էլ գլխները որ բանցրցրին, տեսան հ'իրանց հ'առեչը մե
խատ դալար-ջայել զիթոնի ծառ, ճղների խովը հ'նգե չորս բոլորը,
թռչուններն էլ ճղների մեչ ճըլվըլում են, Սիրամարգն էլ գնաց
խառնվեց ըտոնցը։ Տղերքն էլ խասան, ձիանքից հ'իչան, բաց թողին
ծառի տակն արածալու, հ'իրանք էլ պարկան ծառի խովը, շընգշըն-

դան խով էկավ, ծառից էլ անմահական խոտ էր գալում։ Դու մի՛ ասա ծառից մեշու էլ էն յանը, վիրևում մե խատ պաղ հ՚ախպուր կա։

Էս ծառը էն ջոշ ծառի քոքերից ա, որին Կ՚ոչաղ-տղեն չորնալուց փրգեց, էկե ըստե ռուսե, որ էս ճանփով հ՚սնող, դառնող նստի դինջնա, խանդստանա, հ՚ախպուրն էլ էն հ՚ախպրի սըղնավներից էր, որի հ՚առաչի քարերը Կ՚ոչաղը խորթեց, էտ սըղնավն էլ էկեր էր ըստե դուս էր տվե, որ ծարավ, պապակ մարթիք գան շուր խմեն, սրտները խովնա։

Տղերքը ըստե մե լավ դինջցան, քնան, հ՚ելան խաց կերան, շնորակալ հ՚ելան ծառից, հ՚ախպրից, երուն թոչուններից, հ՚ելան հ՚ընդան ճանփա, գացին։ Մե օր, էրկու օր գացին, վրա իրեք օրվանը մեկ էլ որ հ՚ետ դարցան հ՚իշկին, տեսան ի՞նչ. մե թող ու դուման ա բանցրնում հ՚իրանց հ՚եդևից ու քանի էթում ա, էտ թոզն ու գումանը մոտկընում ա։ Կ՚ոչաղ-տղեն ալբեալը գլխի ա հ՚նգնում, որ էտի Նաադանասու գալուց ա, որ էտենց փոթորիկ ա հ՚ելե, Գառոյին ասավ.— Դու չվախենաս, ձեռով արա թո Սիրամարգն էլ գա մեզի մոտկնա, հիմի մենք ըտու հախիցը կգանք։

Կ՚ոչաղ-տղեն օցի շապիկը խանեց կրակ տվեց, մեկ էլ ըտոնց հ՚առեչը էկավ էն Շամխար օցը, կայնավ պոչին, շոկ-շոկ գլոխ տվեց Գառոյին, Կ՚ոչաղ-տղին, Սիրամարգի-խավին, կայնավ ընդե, ասավ.— Կ՚ոչաղ-տղա, ի՞նչ ես ուզում, ասա կատարեմ։

Կ՚ոչաղ-տղեն ասավ.— Տենում ես էն թոզ ու գումանը, էտի էն անիծած Նաադանասու թափ գալուց ա մեր վրեն, որ էտենց թոզ ու դուման ա հ՚ելե, էտ էլ քանի էթում, մոտկնում ա մեզի։ —Լավ,— ասավ Շամխար օցը,— հիմի տենանք իմալ շուտ կգա էտ անիծուկը. էտ ասավ, Շամխար օցն էր, կանչեց հ՚իրա ճտերին, շարք կայնան՝ հ՚երսներն արին դրա Նաադանասին ու ֆշշացրին։ Փչելուն քիմի՝ էտ դար ու դաշտը սաղ հ՚ելավ փուշ ու տատասկ, էլ Նաադանասին չկարցավ էն թափով գեր մոտկներ որ վնաս խասցներ, քանի էթում էր. ըտոնք հ՚իրարից զաղնում ին։ Լա՛վ։ Նաադանասին տեսավ որ հ՚իրանք էլ չեն կանում էնենց թափով էթան, փուշ ու տատասկը ըտու թաթերը սաղ արին յարալու, արնլվա, հ՚եռից կայնավ բոռաց, սար ու ձոր էտ բոռալու վրեն դողաց, Նաադանասին քաշեց գուրզն ու թալեց տղերքի վրեն։ Գուրզը գնաց պաշտի սորուկ վյորստ։ Գուրզ ֆշշալով էկավ տղերքի գլխների վրայով թռավ գնաց հ՚նգավ կշտի մեշեն։ Գուրզն որ հ՚նգավ մեշեն՝ ծառներն ջարթեց, գրմգրմփոցն հ՚նգավ ախշարը, համա էտ գրմգրմփոցի ձենը որ կդրավ հանդըրթավ, մեկել էդ մեշից էնենց մի դառը գոռոց էկավ որ մարթու մազերը

բիզ-բիզ էր հ՚ընում։ Մե յանից էլ Նառդանասին տեսավ, որ հ՚իրա գուրզը փըստ հ՚նցավ, դրհա կադզավ ու բոռաց՝ «Ֆլա՞, Ֆլա՞, այ Ֆլա՞, չես տենո՞ւմ որ Լոխման-Գառոն, Կ՚ոչազ-տղեն, մեկ էլ Սիրամարգի-խավը էթում են Արաբըստանի թաքավորին լավըցնեն, ըտոնցը բռնա, բռնա չուր ես գամ։ Համա Ֆլեն էնենց էր բոռում, ոնց որ խոքու վրեն հ՚ներ։ Տղերքը ձիանքը թափ քշեցին էկան մտան մեշեն, դեմ քշին դբա էտ ձենը, գացին խասան Ֆլին, տեսան, որ Նառդանասու թալուկ գուրզը էկե հ՚նգե էտ խեղճ Ֆլի կուշտը, մե ծառ ջարթե. էտ ջարթուկ ծառից մե խատ սուր փեղ թըռե էկե կպե Ֆլի բդին, ճղի մտե մեչ, բուդը արե յարալու, էտ յարից արունը շադրվանի նման թալում ա։ Տղերքը որ խասան, ձեռաց ձիանքից հ՚իշան, Կ՚ոչազ-տղեն գնաց Ֆլի հ՚ուշկը մաժեց, Լոխման-Գառոն էլ թևերը քշտեց, էտ փեդի կտորը յարի մշից քաշեց խանեց, թալեց դեն, ձեռով յարեն բռնեց, որ էլ արուն չէթա, թուքը կ՚ում արավ ու թքեց Ֆլի յարի վրեն, էտենց մե էրկու դան կ՚ում արավ թքեց, յարեն ջոչ էր, մե թքելով սաղ յարեն չէր ծածկվում։ Լավ թքեց, յարեն լավցրեց, ցավն էլ կդրավ, Ֆլեն գինշցավ, ձենը կտրեց, ասավ.— Դուք ընձի փրգիք արնքամ հ՚ընելուց, ես ձեր լավութենի տակից մե օր դուրս կգամ, հիմի մանդր ձաք ունեմ, թո բետրնան, դոր էլ որ հ՚ընեք, էս իմ պոչի մազերից քաշեք պախեք ձեր կուշտը, ես ֆլեքի թաքավորի կնիկն եմ, եփ կանչեք, մազերը վառեք, ես խազար ֆլով կգամ ձեզի քյոմակ։

Տղերքը Ֆլին մնաս բարով արին, օցըն էլ էր էկե խասե ըտե, ընդու խետ էլ բարով մնա հ՚ելան, ուրախ զվարթ, հ՚ելան հ՚նգան ճանփա։ Օցն ու Ֆլեն մացին մեշեն։ Լա՚վ։

Մեշով գացին, գացին չուր մեկ էլ մեշից դուրս էկան։ Մեշիցը, որ դուրս էկան, տեսան հ՚իրանց հ՚առեչը մե կապուտ ծով, ոնչ ծեր ունի, ոնչ էլ կ՚բաղ։ Ետե կայնան մե խելի վախտ, ծովին թամաշ արին, մեկ էլ Սիրամարգը որ վիրևով թռեր էր, էկավ Գառոյի հ՚ուսին կայնավ, թևից կըտցով բռնեց, քաշեց մե յանի վրա։ Գառոն գլխի հ՚նգավ, խասկցավ Սիրամարգը բան ա ուզում ասա, յա էլ նշանց տա, համա Կ՚ոչազ-տղի կուշտը խոսալու իրավունք չուներ։ Գառոն, էտու վրեն, ձին թեքեց ու վռազ գնաց Սիրամարգի նշանց տվուկ յանը։ Մե խելակ տեղ գնաց՝ մեկ էլ ձին քը՚ոթ կայնավ, Գառոն հ՚իշկեց տեսավ ձիան օտների հառեչը մե խատ ջոչ, սիրուն, նխշուն իշխան ձուկ էտ ավզների մեչը, բերանը բաց ու խուփ ա անում, հ՚ետա կսատկի։ Իշխանը Գառոյին որ տեսնում ա, ուժն հավաքում ա, անշախ ձենը փորից խանելով խնթրվում ա թե՝ ի՞նչ

կհ'լնի հ'իրանը վերցա տանա թաղա ծովը։ Գառոն առանց ձկան-ասելուն էլ խասկնում ա, թե բանն ինչումն ա, համա որ ձուկն էլ խոսում ա, Գառոն վռազ ձիանից հ'իշնում, կռում ձկանը վերցնում ու վազնում դրրա ծովն ու Իշխին թողնում ջրի մեչ։ Ջուկը ձեռաց սկում ա ջրի տակ, մեշու որ նաֆասը գալում ա վրեն, գլոխը ջրից խանում ա ու Գառոյին ասում.— Ես ծովերի ձգների թաքավորի ախչիկն եմ, ընձի տաղլին խաննց թալեց ծովի ղրաղը, էլ չկառցա հետ էթալ ծովի խորքը, էտենց մացերի, հենա պտի նաֆասս կգրեր, ես մեռնի, դու վրա խասար, ընձի փրգիր մայից։ Ես գիդում եմ դուք դոր եք էթում, էս ծովով պտի հ'սնեք, համա ձեզի ոչ մե փորցանք չըպատայի, ես իմ խորը կասեմ որ ծովում տաղլի չխանա, չուր դուք հ'սնեք էթաք։ Իշխանը էտենց ասավ ու սկավ ջուրը։ Ըտե դինջցան, խաց կերան, նոր թաղա-դրուն հ'ելան խեձան ձիանքը, ծովի ղրաղներով գացին։ Գացին-գացին չուր արևմտից, տեսան հ'իրանց հ'առեչ մե քաղաք, ասին. «Գշերն ըստե մնանք, խարց ու փորց անենք տենանք գյամի կամ լոտկա չլնի, որ մեզի տանա ծովով էն յանը»։ Գացին էտ քաղքի դվորը, տեղ հ'ուզին, տեղավորվան։ Կ'ոչաղ-տղեն, որ գնաց ձիանքին հ'իշկելու, Սիրամարգը տեսավ որ հ'իրանցը լսող չկա, մոտկցավ Գառոյին, ասավ.—Հ'առավտուն մե խատ գյամի պտի էթա, մեզի էլ կտանա, համա էտ գյամու մեչն հ'լնելու յա Նադանասու տղեն, էնի էկեր ընձի մե ֆանդով փախցնա տանա, դու մե կ'աֆաս ճարա, ընձի դի մեչը, թո մարթ-մադաթ չիմանա, չտենա։ Համ էլ, Նադանասու տղեն, որ էտ գյամու մեչն ա, ծովի վրեն շատ տաղլի կհ'լնի, համամեղի հեչ բան էլ չըլնի։ Էս խոսքի վրեն Կ'ոչաղ-տղեն ներս մտավ, Սիրամարգը թռավ հ'իրա տեղը, էլ բան չասավ։

Քնան։ Հ'առավտուն հ'ելան հ'իրանց խացը կերան, գացին ծովի կ'ըաղը, տեսան մե ջոջ գյամի կայներ ա պադրաստվում ա որ էթա։ Կ'ոչաղ-տղեն գնաց գյամչու կուշտը, ասավ.— Մենք էլ ենք ուզում ձեր խետ գալ, ի՞նչ կառնես։ Բարիշան։ Բերին հ'իրանց ձիանքը, ճամփի պաշարը բառցին, կ'աֆասն էլ դրին մե կ'ութու մեչ, որ մարթ չտենա, բերին դրին հ'իրանց կըշտին։ Գյամին յալքյանները բացեց ու հ'նգավ ճամփա։

Գյամին գնաց մե օր, էրկու օր, իրեք օր, մախլաս, գացին խասան ծովի օրթլաղը, մեկ էլ մղրեբը տվեց վրա, մըթնդավ, ծովն ալեկոծվավ, տաղլիքն հ'ելան հա՜-հա՜ յա լցվում են գյամին։ Գյամու վրայի մարթիքին վերցնում մե յանից շպրտում ա մե յան, սաղի էլ խելքները մաղում ա, չեն գիդում, թե ինչ անեն։ Համա Գառոն, Կ'ոչաղ-տղեն հ'իրանց ձիանքը, դինջ արխային կայնուկ են, ըսկի ըտոն-

ցը բան չըլնում, գիվա՜ ըտոնք էտ գյամու մեչը չեն։ Գյամչին էտ բանը որ տենում ա, գալում ա Կ'ոչաղ-տղի կուշտը խտրցնում ա թե.— էտ իմա՞լ բան ա, որ էս տաղլին ձեզի բան չանում, համա ջուրը քիչ ա մնում լցվի գյամին, յա էլ շըռչի, ըսկի ձեր վեջը չէ։ Ըտե Կ'ոչաղ-տղեն վերցրեց ասավ.— Ձեր գյամու մեչը մե խատ անիծուկ չար սատանա կա, էկե որ մեզի վնաս խասցնա, համա մեզի բան չըկանա անա, գյամին որ շըռչի էլ, սաղովտ էլ կարող ա խեղտվեք, մենք էլ, մեր ձիանքն էլ սաղ սալամաթ դուս կգանք (Գառոն Սիրամարգից լսածը, Նադանասու տղի մասին, Կ'ոչաղ-տղին ասել էր)։ Թե ուզում եք փրգվեք, ես էտ անիծած դևին նշանց կտամ, ընձի օգնեք բռնենք թալենք ծովը՝ թո՜ էթա սև հ'անատակը խեղտի, մենք էլ կփրգվենք, դուք էլ։ Գյամչին ասավ.— Քու բախտն ենք հ'նգե, հ'ելի։ էթանք ըտուն գթնենք սատկըցնենք, թո ծովը խանդրթի, էսքան մարթի խոքի փրգենք. մենք էլ մեր ճանփեն էթանք։

Կ'ոչտղ-տղեն հ'ելավ Գառոյից կամք առավ, էտ գյամչու խետ գնաց գյամու մեչը ման գալու։ Կ'ոչաղ-տղեն Նադանասու տղին ճաշնում էր, գիդում էր, որ էնի պոչով ա, համա, դու մի ասա էտ սատանեն պոչը պախեր էր, որ չճաշնան։ Ման էկան, ման էկան. չգթան, հ'ուսները կդրին, էկան հ'իրանց տեղերը, մեկ էլ Կ'ոչաղ-տղեն տեսավ հ'իրանց կ'ութու հ'ետևը, որի մեչը Սիրամարգն էր, մե խատ շրդի կտոր ա հ'նգուկ։ Ձեռաց ճանչցավ, որ էտի Նադանասու տղի պոչի ծերն ա, յավաշ գնաց ու ջուխտ ոտներով կայնավ վրեն ու կըրնգներով ըսկսեց լավ տրորել, չուր էտ անիծուկը էլ ցավին չդիմացավ, կ'ծալով հ'իրա պախկվորուկ տեղից դուս թռավ, վիզ թալեց, խնթրվավ, որ հ'իրանը թողեն էթա, համա Կ'ոչաղ-տղեն մե սիլլա որ զանեց էտ անիծուկի քիթ ու բերնին, ըտու հ'աշկերից կրակ թափավ, գլուխը վզի վրեն ֆըռռաց, հ'ելավ հ'եդև հ'առեչ, էլ մաջալ չտվին որ խոսար, բերին ըտու ձեռ ու ոտը խաստ շրդով կապեցին, ծանդրծանդր քարերն էլ խետը ու թալին ծովը, գնաց հ'անդունդը։ Ըտու հաշիվը որ թամըղացրին, նոր ծովը յավաշ-յավաշ առավ խանդրթել, արևն հ'ելավ, գյամու վրայի մարթիքի խելքներն էկավ գլխները. հ'ելան հ'մնով էկան Կ'ոչաղ-տղին ու Գառոյին շնորակալ հ'ելան. բերին լավ պատիվ տվին, քեֆ արին, չուր խասան ծովի կ'րաղը։ Դու մի ասա, էս հ'մմեն էն Իշխան ձկան հինարն ա հ'ելե, տեսե, որ էտ անիծուկը գյամու մեչն ա տաղլի արե, որ սաղ էլ խեխտվեն՝ սավայի Գառոն ու հ'իրա հ'նգերները։ Լա՛վ։

Գյամուց դուս էկան հ'նգան ճանփա դբա Արաբստանի թաքավորի քաղաքը։ Էտենց շատ ին գացե, քիչ ին գացե, ասված դինա, մեկ

էլ էննց մե ձեն էկավ, որ սաղ վախեցան, Սիրամարգը Գառոյին մե-կերպ խասկցրեց, որ էտի Նադանասու ու հ'իրա կնգա Ջադուի կ'բոժանգ ձենն ա, հ'իմացեր են, որ ըտոնց տղին գցեր եք սև հ'անա-տակը, հ'իմի գալում են որ ըտու ոխը խանեն։ Գառոն էլ Կ'ոչաղ-տղին ասավ։ Կ'ոչաղ-տղեն ալբեալը թուրը քաշեց, գուրզը հազրեց, որ-կովի, համա Սիրամարգը խասկցրեց, որ էտի իզուր ա, հ'ինքը բան չկանա անա, թո էն ֆլեքին, մեկ էլ Զմրուխտ-կ'շին կանչա։ Կ'ոչաղը-ձեռաց խանում ա Ֆլի տված էն պոչի մաղն վառում ա, էն Զմրուխտի բըմբուլը կրակին ա տալում, հ'իրանք էլ պախկվորում են մե խատ-չնգլի մեչ։ Լա՛վ։

Մեկ էլ տեսնում են էն յանեն Նադանասին կնգա վրեն բոռբ-ռում ա, թե էստե պտի հ'ընի, բը ի՞նչ հ'ելան, էկավ, էս յանը թայմ-նեց, էն յանը թայմնեց, գնաց գըբա չնգլը։ Մեկ էլ երգինքը մթնգավ, արևը բռավ, Նադանասին ըտոնց իզը կորցրեց։ Դու մի ասա, որ-էտի ախշրքում ինչքան երուն-թռչուն կա, հավաքվե էկեր են Գառոյի-հավարին, արևի հ'երեսը բռներ են։ Մեկ էլ ոնց որ ժաժկ հ'ընի, գետի-նը ըսկսեց դողալ, էտ էլ խազար ֆլա մե դանից վադնում ին դրբա-չնգլը, որ չթողան Նադանասին մոտկնա չնգլին։ Լա՛վ։

Երուն-թռչուններն հ'իրանց կըտրցներում բռնած քարեր ին բե-ռում, էտ քարերը մեկ էլ կարկթի նման թափին Նադանասու ու հ'ի-րա կնգա գլխին։

Համա էտ նզովյալները շուտ գլխի են հ'նգնում ու փախնում են, թե չէ՝ թռչունները քարով-քարալեզ կանին, քարերի տակն էլ կխորին-ըտոնցը։ Ֆլեքն էլ տեսան, որ Նադանասին փախավ՝ հ'մընով հ'ըն-գան հ'իրանց հ'եղվները, քըշին տարան սև շայնամը։

Ըտոնցից որ պոծան, հ'ելան հ'նգան հ'իրանց ճամփեն ու գա-ցին։ Գացին-գացին չուր խասան Ալրաբըստանի թաքավորի քաղկի-կալերը, տեսան ըտե մե բրռ ճիժ խաղում են։ Կ'ոչաղ-տղեն կան-չում ա ըտոնց, ասում ա.— Վազե՞ք թաքավորին հ'աշկալուսանք տվեք, ասեք, որ Կ'ոչաղ-տղեն էկավ, խետն էլ մե խատ լոխման ա բերում, մե խատ էլ Սիրամարգի-խավ, թո ձեզի հ'աշկալուսանքի-փարեն տան, հ'ընեն դեմներս։ Լա՛վ։

Մե սհաթ չքաշում, թաքավորի նազիր-վազիրները հ'ելնում ափալ-թափալ վազնում են դրբա կալերը։ Խասնում են թե չէ՝ փաթթվում են Կ'ոչաղ-տղին, պաչում, պաչպըչում, հ'ընում առնում են հ'իրանց խետ առոք-փառոք բերում պալատը։ Խասնում են պալատը թե չէ՝ թաքավորն հ'իրա ոտով, կնգա ու ջոչ ախչկա խետ հ'ընում են դիմա-վորում էկողներին, խասնում են հ'իրար փաթթվում, Սիրամարգի-

խավը զաթի հ'առչինն ա հ'լնում, որ խասնում կայնում մոր հ'ուսին, թևերը բացում փաթթվում, ընդուց թոնում խոր հ'ուսին ա կայնում, թոնում քվորն ա փաթթվում, համա չկանում խոսա, իրավունք չկար։

Թաքավորը և էն մեկելները չին խասկնում, որ էտի հ'իրանց պըստի ախչիկն ա։ Գառոն էլ հլը չէր ասե։

Հ'իրիգունը Գառոն ըսկսում ա թաքավորին դեղել։ Օխտը օր քաշում ա, չուր լավ լավնում ա, վերջի օրն էլ թաքավորը էթում բախնիս, մե լավ լոխկնում, հ'լնում մորե մեկ՝ կայնում կ'բաղ։ Լա՛վ։

Թաքավորի լավընալու պատճառով, հ'իրիգունը քեֆ են անում, ուտում, խմում, որ հ'իրանց թաքավորը լավցեր ա։ Թաքավորը հրամայում ա, քյասիբներին փարա են բաժնում։ Կ'ոչաղ-տղին թաքավորը խարցնում ա, թե՝ «Ի՞նչ ես հ'ուզում, հ'ուզա՝ տամ»։ Կ'ոչաղ-տղեն հ'լնում էթում թաքավորի կուշտը կայնում, օխտը դան գլոխ ա տալում, համա բան էլ չասում, ամանչում ա։ Նոր ըտե Գառոն ասում ա.— Թաքավորն աբրած կենա, ես գիդում եմ Կ'ոչաղ-տղեն ի՞նչ ա ուզում, ուզում ա հ'լնի քու շոշ փեսեն, ճանփեն որ գալում ինք, հ'ինքը ընձի ասեր ա, համա հիմի հ'երեսն չբռնում քեզի ասա։ Թաքավորը, ըտու վրեն շատ ա ուրխնում, բերում շոշ աղչկան նշանում էտ Կ'ոչաղ-տղի վրեն, համ էլ հ'իրանը դարցնում ա վաշիր ու քեֆ ուրախութենը ըսկսվում ա։

Թաքավորը վերցում էրկու ծաղիկների կենացը խմում ա, ասում ա.— Լոխման-Գառո, բը քեզ ի՞նչ տամ, որ դու խայոց-տնից հ'ելե էկեր ես ըստը ընձ էլ լավըցրեր ես։ Գառոն հ'լնում կայնում, թաքավորին գլոխ ա տալում, ասում ա.— Թաքավորն ապրած կենա, ես քու ջանսաղութենն եմ ուզում, դու որ լավըցար, էտի հ'մընի բարա յա, իմ ուզածը թո՛ մնա, մե խորուրդ կա, որ կատարվավ՝ նոր կասեմ։

Քեֆը որ պրծավ, հ'ելան գացին հ'իրանց օթաղները քնելու, Գառոն էլ զաթի Սիրամարգի խետ մե օթաղում ին։ Գիշերվա մե վախտ մե խատ տըրքոց հ'ելավ, սաղ տեղերից վեր թրռան, թե էս ի՞նչ կ'ըրըփոց էր որ հ'ելավ, վազնում են դրբա էտ ձենի յանը՝ Գառոյի օթաղը, տեսնում են որ պստի ախչիկը՝ Սիրամարգը, բետցուկ, խորոտցուկ, իմալ մե տրսնխինգի լուսնակ, սպիտակ շորերը խաքուկ, Գառոյի ձեռը բռնուկ էթում են թաքավորի օթաղը։ Դու մի ասա՝ էտ կ'ըրըփոցը Սիրամարգի մորթու պադրավելու ձենն էր, որ հ'ելավ ու հ'ինքը դարցավ էլի հ'առչվա ախչիկը։

Նոր թաքավորն, թաքուլին, սաղ պալատի մարթիք, գալում են

թազադրուն հ'աշկալուսանք ու չուր լուս նստում քեֆ են անում։ Հ'եքսի օրը Սիրամարգն ու Գառոն նստում հ'իրանց գլխի էկածները մեկ-մեկ պատմում են, իմալ ես ձեզի պատմեցի։ Ըստե թաքավորը թասը վերցում, ասում ա.— Գառո ջան, ես խասկցա, թե ձեր մտկի խորուրթը ինչ էր։ Դու և Սիրամարգը հ'իրար արժան եք, բարով վայելեք ձեր թարն ու պսակն. բերում են նշան են գնում։ Լա՛վ։

Գառոն, որ թաքավորին լավրցնում ա, ըտու ձենը հ'նգնում ա սաղ Արարրստանով մեկ, հ'մմեն տեղրանքից հ'լնում, ինչքան յարոտ-փարոտ մարթ կա, գալում են խնթրվում, որ Գառոն լավրցնա։ Գառոն էլ չրխնայում, սաղին էլ լավրցնում ա, ճանփու յա դնում, մե կապեկ էլ փարա չառնում։ Լա՛վ.

Գառոն թո ըստե էտ յարոտ-դռոտներին լավցնա, մենք խաբարը տանք Նադանասուց։

Կ'շերը, որ ըտոնցը քարով-քարալեզ արեցին, ֆլեքն էլ հ'նգան հեգվները լարին, ըտոնք անջախ փախնում պրծնում են։ Համա մե վախտ որ հ'նցնում ա, Նադանասին ու Ջադուն մտածում են, դառնան քյասիբ մարթ ու կնիկ, գան Գառոյի կուշտը, գիվա ուզում են ըժշկվել, համա մե ֆանդով փչացնեն Գառոյին էլ, Սիրամարգին էլ, Կ'ոչաղ տղին էլ, հըլը մե բան էլ հ'եվելի։ Համա էտ բանը հ'իմաստուն Սիրամարգը հ'իմանում ա մեկ-մեկ, տեղին-տեղին պատմում ա Գառոյին։

Մե օր էլ մե յարոտ, փարոտ, գրոոտ, քոչոտ մե մարթ, մե կնիկ գալում են Գառոյի ռտն ու ձեռն են հ'նգնում, որ հ'իրանցն էլ դեղա, լավցնա։ Գառոն ասում ա, գացեք հ'եքուց հ'արեք։ Էն հ'եքսի օրը Գառոն հ'իրան թուքը աղու յա դառցնում, էտ օրը էլ հ'ուրիշներին չդեղում։ Հ'առավոտ շուտ, էն գլխեն Նադանասին ու հ'իրա կնիկը գալում են։ Գառոն հ'իրա բերնի թուքը քսում ա ըտոնց յարեքին ու ասում ա, չուր հ'իրգուն պտի վազնեք խասնեք ծովը, ընդե լոխկնաք, որ լավնաք, թե չէ ձեր յարեքը շատ փիս յաբեք են, առանց ծովի մեջը լոխկնալու չլավընա։

Նադանասին ու Ջադուն դեղվելուց հետո վազնում են դրբա ծովը, խանքակտուր, խասնում են ու հ'իրանցը քցում են ջուրը, էտ հ'րոպեյին ուռում են ու թալում։ Լա՛վ։

Թաքավորը մարթիք ա ճանփում վազիրի խետ դրբա խայոցտուն, որ Գառոյի խորն ու մորն բերեն։ Որ բերում են, նոր հ'լնում են ըտե ուրախութենը թազրցնում, օխտ օր, օխտը գիշեր, օխտը ձեռ նաղարա-զուռնով, օխտը ձեռ խանանդեքով, ախշարաժողով են

անում, հավաքում խառնիս են անում։ Լոխման-Գաոոն պսակվում ա· Սիրամարգի վրեն, Կ'ոչաղ-տղեն էլ թաքավորի ջոչ ախչկա վրեն։

Հ'մմեն խասան հ'իրանց մուրազին, դուք էլ խասնեք ձեր մուրազին։

Ասսուց իրեք խնձոր հ'երթըսեն հ'նգավ. մեկն ասողին, մեկը լսողին, մեկն էլ քյասիբ-քյուսբին։